ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 76

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16.12.2020Թ.ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝ ավագանին
որոշեց.

Հաստատել համայնքի ավագանու 16.12.2020թ.թիվ 11 նիստի օրակարգը՝

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2.ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ.ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3.ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ,ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ
4.ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ
5.ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6.ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ (ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ) ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՃՇՏՄԱՆ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
7.ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԳՐԻԳՈՐ ՍՈՒՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՏԱՐԱԾՔԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԻՐԵՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
8.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՍԵՐՅՈԺԱ ԲԱԴԱԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ԻՐԵՆ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԻԶՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱԲԱՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱՍԱՓՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 77-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղականինքնակառավարմանմասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի18-րդ կետի, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 9-12 , 14-րդ հոդվածների պահանջներով՝ ավագանին

ո ր ո շ ե գ. N 78-Ն

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնքի 2021 թվականի տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը.

1.Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդթվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ ***յոթ հազար հինգ հարյուր դրամ,***

բ. Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ***տասնհինգ հազար դրամ.***
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ***քսանհինգ հազար դրամ,***
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ***քսանհինգ հազար դրամ,***

-3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ***հիսուն հազար դրամ.***

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ***մեկ հազար հինգ հարյուր դրամ,***

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝***երկու հազար հինգ հարյուր դրամ.***

2)համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ***մեկ հազար հինգ հարյուր դրամ,***

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդթվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ.. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝***երկու հազար հինգհարյուր դրամ.***

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝***մեկ հարյուր հազար դրամ.***

5)համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ ***հիսուն հազար դրամ***

6)համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվությանհամար՝

ա.ոգելիցևալկոհոլայինխմիչքիվաճառքիթույլտվությանհամար՝յուրաքանչյուրեռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ***երկու հազար դրամ,***
- 26-իցմինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ***հինգ հազար մեկ հարյուր դրամ,***
- 50-իցմինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ***վեց հազար վեց հարյուր դրամ,***
- 100-իցմինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ***տասնմեկ հազար դրամ,***
- 200-իցմինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ***տասներեք հազար դրամ***,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ***քսանհինգ հազարդրամ.***

բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ***երկու հազար դրամ***,
- 26-իցմինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ***հինգ հազար մեկ հարյուր դրամ,***
- 50-իցմինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ***վեց հազար վեց հարյուր դրամ,***
- 100-իցմինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ***տասնմեկ հազար դրամ,***
- 200-իցմինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ***տասներեք հազար դրամ.***

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ***քսանհինգ հազար դրամ.***

7) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ ***մեկ հարյուր յոթանասունհինգ դրամ՝մեկ քառակուսի մետրի համար.***

8) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ ***քսանհինգ հազար դրամ,***

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ ***հիսուն հազար դրամ,***

գ.. բաղնիքների (սաունաների) համար՝ ***երկու հարյուր հիսուն հազար դրամ,***

դ.. խաղատների համար՝ ***հինգ հարյուր հազար դրամ,***

ե. Շահումով խաղերի համար՝ ***երկու հարյուր հիսուն հազար դրամ***,

զ. Վիճակախաղերի համար՝ ***յոթանասունհինգ հազար դրամ.***

9) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ***երկու հազար վեց հարյուր դրամ,***
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝***հինգ հազար դրամ***,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի բյեկտի համար՝ ***յոթ հազար հինգ հարյուր դրամ,***
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի բյեկտի համար՝***տասներեք հազար դրամ,***
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ***տասնհինգ հազար դրամ,***
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ***քսանհինգ հազար դրամ.***

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ***հինգ հարյուր դրամ***,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ***մեկ հազար դրամ,***
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝***երկուհազար դրամ,***
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝***չորս հազար դրամ,***

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ***յոթ հազար հինգ հարյուր դրամ***,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի բյեկտի համար՝***տասներկու հազար հինգ հարյուր դրամ.***

10) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար,յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. Ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ***մեկ հազար դրամ,***

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ***մեկ հազար յոթ հարյուր հիսուն դրամ,***

գ.. սոցիալական գովազդի համար՝***զրո դրամ***,

դ.. այլ արտաքին գովազդի համար՝ ***յոթ հարյուր հիսուն դրամ,***

ե. Դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ ***մեկ հարյուր ութանասունյոթ դրամ 50լումա.***

զ. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել էիր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրել ու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ ***յոթանասուն հինգ դրամ.***

11) Հայաստանի Հանրապետության Շահումյան համայնքի անվանումը որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ ***հիսուն հազար դրամ.***

12) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ ***հինգ հազար դրամ***.

13) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ ***երկու հարյուր հիսուն հազար դրամ***.

14) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝օրացուցային տարվա համար ***քսանհինգ հազար դրամ.***

2. Սույն որոշման 1-ին կետով սահմանված դրույքաչափերի համար կիրառվելէ 0.5 գործակիցը:

3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնքի 2021 թվականի տեղական վճարների տեսակները ,դրույքաչափերը և տրվող արտոնությունները.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ ***հինգ հազար դրամ.***

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շիանարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերիև շինությունների /այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար,համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ ***չորս հազար դրամ.***

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ ***հինգ հազար դրամ.***

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ ***հինգ հազար դրամ.***

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ ***երեք հազար դրամ.***

6) համայնքի կողմից աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար յուրաքանչյուր ամիս սահմանել վճար՝

ա. Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար յուրաքանչյուր բնակչի համար սահմանել ամսեկան վճար՝***մեկ հարյուր հիսուն դրամ.***

բ. համայնքի առևտրի,հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների օբյեկտների յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝***ամսեկան հինգ դրամ.***

գ.. արտադրական,արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների 1քմ-ի համար՝***ամսեկան հինգ դրամ.***

դ.. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային և այլ հասարակական շինությունների մասով՝ 1քմ-ի համար ***ամսեկան երեք դրամ.***

ե. Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ՝

-ըստ ծավալի 1խմ-ի համար ՝***երեք հազար դրամ.***

-ըստ զանգվածի 1 տոննայի համար՝***վեց հազար դրամ.***

7) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝***ամսեկան հինգ հազար դրամ.***

Արտոնություններ՝

ա.նույն ընտանիքից 3 երեխաների համար՝

1-ը անվճար.

բ. *նույն ընտանիքից 4 երեխաների համար՝* **2-ը անվճար.**

*գ.ծնողազուրկ երեխայի համար՝/միկողմանի և երկկողմանի/ ՝**անվճար/.***
*դ.Արցախյան պատերազմում զոհվածի ընտանիքի երեխայի համար՝ **անվճար.***
գ.**Արցախյան պատերազմում վիրավորվածի /**հաշմանդամի**/ ընտանիքի երեխայի համար՝**անվճար.
*ե.Արցախյան պատերազմի մասնակցի ընտանիքի երեխայի համար՝**50%.***
*զ.զին.ծառայողի /սպայական կազմի/ընտանիքի երեխայի համար՝**50%:***
8) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (արվեստի դպրոց) ծառայություններից օգտվողների համար՝ յուրաքանչյուր երեխայի համար ըստ բաժինների ամսեկան

ա. դաշնամուրային – ***երեք հազար դրամ*** .
բ. վոկալային - ***երեք հազար հինգ դրամ.***
գ. նկարչության - ***երկու հազար հինգ հարյուր դրամ.***
դ. պարի -***երեք հազար դրամ.***
ե. քանոնի -***երկու հազար ութ հարյուր դրամ.***
զ. դհոլի - ***երեք հազար հինգ հարյուր դրամ.***
է. դուդուկ/շվի/,կլառնետ-***երեք հազար դրամ.***
ը. նախապատրաստական դասարան- ***երեք հազար դրամ.***

Արտոնություններ՝
ա.նույն ընտանիքից 3 երեխաների համար՝
1-ը անվճար.
բ. *նույն ընտանիքից 4 երեխաների համար՝* ***2-ը անվճար.***
*գ.ծնողազուրկ երեխայի համար՝/միկողմանի և երկկողմանի/ ՝**անվճար.***
*դ.Արցախյան պատերազմում զոհվածի ընտանիքի երեխայի համար՝ **անվճար.***
գ.**Արցախյան պատերազմում վիրավորվածի /**հաշմանդամի**/ ընտանիքի երեխայի համար՝**անվճար.
*ե.Արցախյան պատերազմի մասնակցի ընտանիքի երեխայի համար՝ **50%.***
*զ.զին.ծառայողի /սպայական կազմի/ընտանիքի երեխայի համար՝ **50%:***
9) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ սահմանել՝
ա. Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝ ***հինգի հարյուր դրամ.***
բ. ծննդօգնություն՝
թեթև միջամտության համար՝ ***մեկ հազար դրամ.***
ծանր միջամտության համար՝ ***հինգ հազար դրամ.***
գ.. արյունառում կամ այլ նմուշառում՝
- մանր կենդանի՝***մեկ հարյուր դրամ.***
-խոշոր կենդանի՝***երկու հարյուր դրամ.***
բացառությամբ <<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում >> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների,
դ.. կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝
- ախտահանություն-1 քմ՝***երկու հարյուր դրամ.***
- միջատազերծում(դեզինսեկցիա)- ***1 քմ՝մեկ հարյուր դրամ.***

-կրծողների ոչնչացում (դեռատիզացիա)-***1 քմ՝ երկու հարյուր դրամ.***

ե.արհեստական սերմնավորում՝ ***հինգհազար դրամ.***

զ.կենդանու հերձում՝

-մանր կենդանի՝***մեկհազար դրամ.***

-խոշոր կենդանի՝***երեքհազար դրամ.***

է. Կենդանու բուժում՝ կախված հիվանդությունների տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր այցելությունը

- մանր կենդանի՝***մեկ հազար դրամ.***

խոշոր կենդանի՝***երկու հազար դրամ.***

ը. Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից՝

- մանր կենդանի՝***մեկ հազար դրամ.***

խոշոր կենդանի՝***երկու հազար դրամ.***

թ.կենդանիների հետսպանդային զննում

- մանր կենդանի՝***մեկ հազար դրամ.***

- խոշոր կենդանի՝ ***երկու հազար դրամ.***

Կողմ -6 **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

ԱԶԻԶՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱԲԱՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱՍԱՓՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 78-Ն

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ.ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1. 5) կետի պահանջներով՝ ավագանին *որոշեց*.

Թույլատրել համայնքի 2020թ.բյուջեում կատարելու հետևյալ փոփոխությունները.

1. 09.01.01.51 գործառնական դասակարգման 4511(սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմ.)3.1(երեք միլիոն մեկ հարյուր հազար)մլն դրամից 1.8 տեղափոխել 10.07.01.54 գործառնական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածին, 1.0 (մեկ)մլն.դրամը՝ 10.07.01.54 գործառնական դասակարգման 4726 (հուղարկավորության նպաստներ բյուջեից) հոդվածին, իսկ 300.0 (երեք հարյուր հազար) հազար դրամ գումարը տեղափոխել 01.01.01.51 գործառնական դասակարգման 4261 (գրասենյակային նյութեր)հոդվածին,
2. 10 07 01 55 գործառնական դասակարգման 4819 (նվիրատվ.այլ շահույթ չհետապնդ. կազմակերպութ.) հոդվածից 1.050 (մեկ միլիոն հիսուն հազար)մլն. դրամ գումարը տեղափոխել 10 07 01 54 գործառնական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածին:

Կողմ՝-6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԻԶՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱԲԱՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱՍԱՓՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 79

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ,ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11) և 28) կետերի,<<Աշխատանքային օրենսգրքի >>113-րդ հոդվածի պահանջներով `ավագանին

ո ր ո շ ե ց.

1.Հաստատել համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը,աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

1.1) համայնքապետարանի աշխատակազմի՝ համաձայն թիվ 1 հավելվածի,

1.2) <<Շահումյանի մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ի՝ համաձայն թիվ 2 հավելվածի,

1.3)<<Արվեստի դպրոց>>ՀՈԱԿ-ի՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Շահումյան համայնքի ավագանու 05.02.2020թ.<<Շահումյան համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի,համայնքապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի,հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և համայնքի ավագանու 09.12.2019թ.թիվ 56-Ն որոշումը իր հավելվածներով ուժը կորցրած ճանաչելու մասին>>թիվ 11-Ն որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԻԶՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱԲԱՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱՍԱՓՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

Հավելված թիվ 1
Շահումյան համայնքի ավագանու
16 դեկտեմբերի 2020թ
թիվ 79 որոշման

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ,ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ -2021թ.

Աշխատակիցների թվաքանակը -17

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅԱՉԱՓԸ (ՀՀդրամ)
	Համայնքի ղեկավար		330.000
	ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ		
	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	180. 000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
	Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	210.000
	Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	193.000
	Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	170.000
	Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-2/	1	170.000
	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-2/	1	121.000
	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/	1	107.700
	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		
	Հարկահավաք	1	140.000
	Գրադարանավար	1	128.000
	ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
	Վարորդ	1	121.000
	Հավաքարար	1	100.000
	Հակակարկտային կայանների պահակ	1	94.000
	Անասնաբույժ	1	90.000
	Աղբահանության վճար հավաքագրող (պայմանագրային)	1	Հավաքագրած գումարի 20%
	օպերատոր	1	100.000
	էլեկտրիկ	0.5	45 000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Շ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված թիվ
Շահումյան համայնքի ավագան
16 դեկտեմբերի 2020թ
թիվ 79 որոշմա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ-2021

Աշխատակիցների թվաքանակը -21

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	1 միավորի դրույքաչափը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀդրամ)
տնօրեն	1		185.000
հաշվապահ	1		100.000
բուժքույր	0.75	126.8	95.000
դաստիարակ	3.75	152	570.000
դաստիարակի օգնական	3.3	29.7	294.000
խոհարար	1		98.000
խոհարարի օգնական	0.75	126.8	95.000
երաժշտ.դասատու	0.75	126.8	95.000
դռնապան	1		92.000
պահակ	1		92.000
տնտեսվար	1		95.000
գործավար	1		95.000
այգեպան	1		92.000
լվացարար	0.5	136	68.000

Աշխ.քարտուղար՝ Շ.Գրիգորյան

Հավելված թիվ 3
Շահումյան համայնքի ավագանու
16 դեկտեմբերի 2020թ. թիվ 79որոշմա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ -2021թ.

Աշխատակիցների թվաքանակը -14

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀդրամ)
տնօրեն	1	140.000
ուսմասվար	0.5	57.000
հաշվապահ	1	93.000
դասատու	8	93.000
դասատու	1	130.000
հավաքարար	1	93.000
պահակ	1	93.000

Աշխ.քարտուղար՝ Շ.Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 80

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1.32)-րդ կետի պահանջներով՝ ավագանին *որոշեց.*

Հաստատել համայնքի սեփականության վերաբերյալ հանձնաժողովի 08.12.2020թ.կազմած ակտերը՝համաձայն հավելվածների.

1) համայնքապետարանի.
2) գրադարանի.
3) ժամանցի սենյակի.
4) արվեստի դպրոցի գույքագրման արդյունքների վերաբերյալ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԻԶՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱԲԱՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱՍԱՓՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 81

ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1.21) կետի պահանջներով՝ ավագանին *Ո Ր Ո Շ Ե Ց .*

Թույլատրել համայնքի ղեկավարին աճուրդային կարգով օտարելու.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող,բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասերից,հասարակական շինություն կառուցելու նպատակով,0024-0005 ծածկագրի տակ գտնվող 0.0028 հա հողամաս (հասցեն՝ Շահումյան համայնք,փողոց՝Երեմ Կարապետյան N 21/3).

2. Օտարվող հողամասի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով,օտարել 2020-21թ.թ.ընթացքում:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԻՋՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱԲԱՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱՍԱՓՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 82

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ (ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ) ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՃՇՏՄԱՆ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հինք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշումը,հողատեսքերի ճշտման վերաբերյալ հանձնաժողովի 17.11.2020թ կազմած ակտը՝ ավագանին

որոշեց.

Համաձայն հանձնաժողովի կողմից քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասերի(սեփականաշնորհված) հողատեսքերի ստուգման արդյունքների ,քանի որ բնության մեջ և հողի հարկի բազայում առկա է անհամապատասխանություն (հողի հարկի բազայում վարելահող է կամ խաղողի այգի,կորիզավոր,հնդավոր իսկ իրականում՝ խաղողի այգի կամ վարելահող ,հնդավոր),հողի հարկի բազան ուղղելու նպատակով ,համաձայն հավելվածի՝ կատարել քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասերի (սեփականաշնորհված) հողատեսքերի փոփոխություն՝ նախկինում տնկված և մինչև օրս որպես նորատունկ չհաշվառված բազմամյա տնկարքները հաշվառել, գրանցել որպես նորատունկ և ըստ տնկման տարիների տալ հողի հարկի արտոնություն(հավելվածը կցվում է):

Կողմ -6	Դեմ -0	Ձեռնպահ -0

ԱԶԻԶՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱԲԱՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱՍԱՓՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

Հավելված
Շահումյան համայնքի ավագանու
16.12.2020թ.նիստի թիվ 82.որոշման

2020 քանդում-հիմնում

N	Համայնքի անվանումը	Հողամասի սեփականատերը	Հողամասի ծածկագիր	Հողատեսքը	Փոփոխված հողատեսքը	հողամասի մակերեսի չափը/հա/	Տրվել է արտոնություն
1	Շահումյան	Հայրապետյան Ավետ	0151-0011 0151-0012	խաղող	վարելահող	0.18 0.42	
2		Սարգսյան Աննա	0150-0009	խաղող	վարելահող	0.45	
3		Հովհաննիսյան Լուսյա	0146-0001	խաղող	վարելահող	0.51	
4		Ներսիսյան Գեղամ	0165-0004	խաղող	կորիզ	0.20	ն/տ 2020-25թթ
5		Սարդարյան Աննա	0146-0018	կորիզ	խաղող	0.22	ն/տ 2020-24թթ
6		Կարապետյան Ստեփանոս	0147-0037	կորիզ	վարելահող	0.3336	
7		Շահբազյան Արևհատ	0179-0002	խաղող	խաղող	0.275	ն/տ 2020-24թթ
8		Մաղաթյան Համլետ	0146-0020	խաղող	խաղող	0.20	ն/տ 2020-24թթ
9		Հակոբյան Գեղամ	0140-0006	հնդավոր խաղող	վարելահող	0.06 0.2	
10		Խաչատրյան Վաղինակ	201-006	խաղող	վարելահող	0.06	
11		Հակոբյան Հովհաննես	0191-0008	խաղող	վարելահող	0.32	
12		Հարությունյան Գոռ	0175-0007	խաղող	հնդավոր	0.39	ն/տ 2020-25թթ
13		Գրիգորյան Գառնիկ	0143-0011	կորիզ	կորիզ	0.2	ն/տ 2020-25թթ
14		Մերգոյան Արսեն	0110-0002	խաղող	խաղող	0.15	ն/տ 2020-24թթ
15		Կոստանյան Ռազմիկ	0169-0004	խաղող	խաղող	0.3	ն/տ 2020-24թթ
16		Հմայակյան Անդրանիկ	0188-0002 0186-0010 0186-0011	խաղող	վարելահող	0.11 0.38 0.39	
17		Ղարիբյան Արևհատ	0217-0010	հնդավոր	խաղող	0.08	ն/տ 2020-24թթ
18		Բաղալյան Հրաչյա	0138-0011	հնդավոր	խաղող	0.20	ն/տ 2020-24թթ
19		Մինասյան Հերիքնազ	0139-0014	հնդավոր	վարելահող	0.30	
20		Հարությունյան Դոխտար	0175-0010	վարելահող	խաղող	0.17	
21		Սարգսյան Սանդուխտ	0170-0012	վարելահող	խաղող	0.07	
22		Աբգարյան Ռուբիկ	0139-0015	վարելահող	խաղող	0.15	
23		Սմբատյան Վարազդատ	0206-0001	վարելահող	խաղող	0.20	
24		Քոսոյան Բագրատ	0175-0002	վարելահող	խաղող	0.42	
25		Սարգսյան Ցոլակ	0144-0011	վարելահող	խաղող	0.20	
26		Հովհաննիսյան Անգին	0185-0003	վարելահող	խաղող	0.59	
27		Ենոքյան Սեդա	0205-0012	խաղող	հնդավոր	0.30	
28		Եփրեմյան Խաչատուր	0159-0011	վարելահող	խաղող	0.25	
29		Բարսեղյան Գեղամ	0198-0004	վարելահող	խաղող	0.19	

Աշխ.քարտուղար՝ Շ.Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 83

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԳՐԻԳՈՐ ՍՈՒՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՏԱՐԱԾՔԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԻՐԵՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 12 ապրիլի 2001 թվականի N 286 որոշումը,համայնքի բնակիչ Գրիգոր Հարությունյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող,Իսահակյան 2/5 հասցեում գտնվող տնամերձ հողամասին կից տարածքը կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու մասին՝ավագանին

որոշեց.

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Շահումյան համայնքի Իսահակյան 2/5 հասցեում գտնվող 20 քմ հողատարածքը գտնվում է համայնքի բնակիչ Գրիգոր Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասին կից և այն որպես առանձին գույքային միավոր անհնար է կառուցապատման իրավունքով տրամադրելու, նպատակահարմար համարել մրցութային/արգով, տարեկան 30.0 հազար ՀՀ դրամ վարձավճարով, կառուցապատման իրավունքով տրամադրել Գրիգոր Հարությունյանին:

Կողմ-6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԻԶՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱԲԱՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 84

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՍԵՐՅՈԺԱ ԲԱԴԱԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ԻՐԵՆ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Շահումյան համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին>> կարգի 16.կետը,այն է <<Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության չափը սահմանվել է 100 000 դրամ:Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալականն օգնություն կարող է հատկացվել առավելագույնը 2 անգամ,որի չափը չի կարող գերազանցել սոցիալական օգնության առավելագույն չափի 1.5-ապատիկի չափը >>:Քանի որ համայնքի բնակիչ Սերյոժա Բադալյանի ընտանիքին 2020թ.ընթացքում արդեն տրվել է 273 000(երկու հարյուր յոթանասուներեք հազար) դրամ ֆինանսական աջակցություն՝ ավագանին ո ր ո շ ե ց.

Շահումյան համայնքի բնակիչ Սերյոժա Բադալյանին 2020թ.ընթացքում որպես ֆինանսական աջակցություն նորից գումար տրամադրելու վերաբերյալ դիմում - խնդրանքը մերժել:

Կողմ -6	Դեմ -0	Ձեռնպահ -0

ԱԶԻԶՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱԲԱՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀՈՎԱՍԱՓՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ